ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1372-Ա

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14 պրիմ 3 հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդև 33-րդ կետերով, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ շինությունը ինքնակամ /2023BGW33D/ կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող 05-002-0101-0082 կադաստրային ծածկագրով, Ճամբարակ քաղաքի Տ. Մեծի փող. 11/1 հասցեում գտնվող հողատարածքի վրա համայնքի բնակիչ Գեղամ Վաղարշակի Գևորգյանի կողմից.

Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝

1. Ճամբարակ համայնքի բնակիչ Գեղամ Վաղարշակի Գևորգյանի կողմից Ճամբարակ քաղաքի Տ. Մեծի 11/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի 0.00449 հա հողատարածքի վրա 2000 թվականին ինքնակամ /2023BGW33D/ կառուցված 34.65 քմ ներքին և 44.9 քմ արտաքին մակերեսով շինությունը /ավտոտնակը/ ճանաչել օրինական համայնքային սեփականություն՝ հետագայում իրեն օտարման կարգով տրամադրելու նպատակով:
2. Ուժը կորցրած ճանաչել Ճամբարակ համայնքի ղեկավարի 11.01.2024թ. N 21-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և ենթակա է պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ

20 __ թ. _____ ____
ք. Ճամբարակ